Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 28-ի N 516 -Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն օգնություն ցույց տալն է Հայաստանի տարածաշրջանների համայնքներում բնակվող խոցելի խմբերին՝ հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին և սոցիալական ծանր պայմաններում գտնվող այլ ընտանիքների, կրթական հաստատություններին, բարեգործական օգնության (հագուստ և կոշիկ (բոլորը՝ նոր), գրենական պիտույքներ և խաղալիքներ, շինանյութեր, կահույք և կենցաղային պարագաներ, մարզական պարագաներ, հաշմանդամների անվասայլակներ, հիգիենիկ պարագաներ և այլն) բաշխման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի (34834 Վեյերհաուսեր վեյ 5, ֆեդերալ վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ), Կանադայի (1 Վորլդ դրիվե, Միսսիսագվա, Օնտարիո) և Ավստրալիայի (1 Վիժն դրայվ, Բարվուդ իստ, Ավստրալիա 3151) աջակցող գրասենյակների կողմից:
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն իրականացնողը «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն է (հասցեն՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755): Ծրագիրն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների ու համայնքային նախաձեռնող խմբերի օգնությամբ և համայնքների անդամների մասնակցությամբ:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մարդասիրական բեռներով ստացված ապրանքները հիմնականում բաժանվելու են տարածաշրջաններում ընդգրկված հետևյալ համայնքների հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին և սոցիալական ծանր պայմաններում գտնվող այլ ընտանիքների, կրթական հաստատություններին՝

		Երևանում՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան. **Ալավերդու տարածաշրջան՝** Ալավերդի, Արևածագ, Մղարթ, Աքորի, Կաճաճկուտ, Այրում, Ճոճկան, Հաղպատ, Քարինջ, Ջիլիզա, Ախթալա. **Ապարանի տարածաշրջան՝** Ապարան, Արագած, Ձորագլուխ, Հարթավան, Լուսագյուղ, Քուչակ, Շենավան, Շողակն, Նորաշեն, Վարդենիս, Եղիպատրուշ, Երնջատափ. **Գավառի տարածաշրջան՝** Գավառ, Լճափ, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Հայրավանք, Ծաղկաշեն, Բերդկունք, Ծովազարդ, Գանձակ, Սարուխան. **Գյումրի քաղաքի** Անի, Մուշ, Շերամ և «Ավստրիական գյուղ» թաղամասեր, ինչպես նաև Մարմաշեն և Հովունի գյուղեր. **Կապանի տարածաշրջան՝** Կապան, Շղարշիկ, Բարաբաթում, Բաղաբուրջ, Կավարտ, Բեխ, Վաչագան, Աշոտավան, Երկաթուղայինների, Սարահարթ, Բաղաբերդ, Հալիձոր, Բաղաբերդ 1, Ձորք, Վահանավանք, Ագարակ, Անտառաշատ, Աղվանի, Արծվանիկ, Գեղանուշ, Գեղի, Դավիթ-Բեկ, Եղեգ, Ծավ/Շիշկերտ, Ներքին Խոտանան, Շիկահող, Սրաշեն, Սյունիք, Տանձավեր, Օխտար, Եղվարդ, ինչպես նաև Անդոկ (Արամ Մանուկյան) և Մուշեղ Հարությունյան համատիրություններ. **Սիսիանի և Գորիսի տարածաշրջան՝** Սիսինշան, Գորիս, Բալաք, Դարբաս, Շամբ, Գորայք, Անգեղակոթ, Իշխանասար, Աղիտու, Սալվարդ, Սառնակունք, Լոր, Լծեն, Շաղատ, Շաքե, Գետաթաղ, Մուծք, Աշոտավան, Տոլորս, Բոնակոթ, Քարահունջ, Հալիձոր, Հարժիս, Խոտ, Շինուհայր. **Ստեփանավանի տարածաշրջան՝** Ստափանավան, Միխայլովկա, Լեռնահովիտ, Պրիվոլնոյե, Սվերդլով, Ուռուտ, Ագարակ, Յաղդան, Կուրթան, Վարդաբլուր, Հոբարձի, Սարչապետ, Նորաշեն, Բլագոդարնոյե, Գյուլագարակ, Գարգառ, Կողես, Պուշկինո, Լոռի բերդ, Ամրակից, Լեջան. **Թալինի տարածաշրջան՝** Թալին, Ագարակ, Արեգ, Ակունք, Աշնակ, Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ, Արտենի, Նոր Արթիկ, Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն, Դավթաշեն, Կաքավաձոր, Կաթնաղբյուր, Իրինդ, Եղնիկ, Դաշտադեմ, Հացաշեն, Ցամաքասար, Ջարինջա, Սուսեր, Մաստարա, Կարմրաշեն, Ոսկեթաս, Ջովասար, Գառնահովիտ. **Իջևանի տարածաշրջան՝** Իջևան, Գետահովիտ, Խաշթառակ, Լուսաձոր, Դիտավան, Ազատամուտ, Այգեհովիտ, Աչաջուր, Սևքար, Սարիգյուղ, Բերդ, Պառավաքար, Արծվաբերդ, Տավուշ, Ներքին Կարմիր աղբյուր, Նավուր, Նորաշեն, Ոսկեվան, Բաղանիս, Կոթի. **Վարդենիսի տարածաշրջան՝** Վարդենիս, Ավազան, Գեղամասար, Արեգունի, Դարանակ, Նորաբակ, Շատվան, Ջաղացաձոր, Գեղամաբակ, Շատջրեք, Այրք, Ազատ, Կութ, Սոթք, Տրետուք, Կուտական, Կախակն, Արփունք, Փամբակ, Ծափաթաղ, Ջիլ, Վաննան, Տորֆավան, Արտանիշ, Ակունք, Կարճաղբյուր, Լճավան, Լուսակունք, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ, Նորակերտ և Ծովակ.

		Ճամբարակի տարածաշրջան՝ Ճամբարակ, Աղբերք, Շորժա, Դրախտիկ, Մարտունի, Ծովագյուղ. **Ամասիայի տարածաշրջան՝** Ամասիա, Արեգնադեմ, Գտաշեն, Գյուլիբուլաղ, Ողջի, Մեղրաշատ, Ձրաձոր, Հողմիկ, Բանդիվան, Գառնառիճ, Բերդաշեն, Աշոցք, Բավրա, Սիզավետ, Թավշուտ, Ղազանչի, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Կրասար, Կարմրավան, Մուսայելյան, Վարդաղբյուր, Սալուտ, Ցողամարգ, Թորոսգյուղ, Լեռնագյուղ, Գոգհովիտ, Արփենի, Ջույգաղբյուր, Ախուրյան, Հայկավան, Քեթի, Հացիկ, Կարմրաքար. **Նոյեմբերյանի տարածաշրջան՝** Նոյեմբերյան, Այրում, Կողբ, Բերդավան, Հաղթանակ, Դովեղ, Ջորական, Արճիս, Լճկաձոր, Պտղավան, Դեղձավան, Բագրատաշեն, Դերեդավան, Ջուջևան, Ոսկեպար, Բարեկամավան: Այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններ, Հայ Առաքելական Եկեղեցի Ծրագրի իրականացման բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 9,100,000 ԱՄՆ-ի դոլար, որը բաշխվում է հետևյալ մոտավոր արժեքներով՝ ՎՎ ԱՄՆ՝ 6,000,000 ԱՄՆ-ի դոլար, ՎՎ Կանադա՝ 2,000,000 ԱՄՆ-ի դոլար, ՎՎ Ավստրալիա՝ 1,000,000 ԱՄՆ-ի դոլար, տրանսպորտային ծախսերը Հայաստանի տարածքում կազմում են 100,000 ԱՄՆ-ի դոլար:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմում է 327,000 մարդ, այդ թվում՝ 44,000 երեխա: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տարածքային զարգացման ծրագիրը տարածաշրջանի համայնքներում իրականացրել է հիմնական կարիքների ուսումնասիրություն: Դրա արդյունքում ծրագրում ընդգրկվել է 359 համայնք, որոնք ներկայացված են ծրագրի 5-րդ բաժնում: Մնացած շահառուներն ընտրվելու են տարածաշրջանի սոցիալական ծառայության, ծրագրի մոնիթորինգի և համայնքային ակտիվ խմբերի միջոցով՝ կազմակերպությունում մշակված ընտանիքների կարիքների գնահատման հարցաթերթիկի հիման վրա: Սոցիալապես անապահով քաղաքացիներին բարեգործական օգնություն է տրվելու նաև համայնքների ղեկավարների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Բացի դրանից, անհրաժեշտության դեպքում ապրանքներ են բաժանվելու նաև տարածքային ծրագրում չընդգրկված այլ համայնքների կարիքավոր ընտանիքներին, երեխաներին, կրթական ու առողջապահական հաստատություններին, կազմակերպության հետ համագործակցող հասարակական կազմակերպություններին: Ներկա պահին անհնար է ներկայացնել շահառուների կոնկրետ ցուցակ, քանի որ ստացված բեռի պարունակության ու քանակի մասին ճշգրիտ տեղեկությունները պարզվում են բեռի ստացման պահին: Միևնույն ժամանակ բեռի յուրաքանչյուր խմբաքանակի ներմուծման համար ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին առանձին հայտ է ներկայացվում, որին կցվում են ստացվող բեռի պարունակության և բաշխման ցանկի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թ. հունվարի 1-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019-2021 թվականների ընթացքում ծրագրի շրջանակներում նախատեսվում է բաշխել 9,100,000 ԱՄՆ-ի դոլարի արժողությամբ բարեգործական օգնություն, որի չափերն ըստ համայնքների պլանավորվել են շահառուների թվին համապատասխան: Բարեգործական օգնությունը հիմնականում բաշխվելու է Նոր տարվա, Սուրբ ծննդի, Զատիկի տոների կապակցությամբ, ամառային ճամբարի ժամանակ, երեխաների պաշտպանության օրը, ուսումնական տարվա սկզբին, ինչպես նաև՝ ըստ ծագած անհրաժեշտության:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գները	Մարդասիրական բեռների ընդհանուր արժեքը կազմում է մոտավորապես 9,000,000 ԱՄՆ-ի դոլար, որից հագուստ՝ 2,500,000 ԱՄՆ-ի դոլար, կոշիկ՝ 2,000,000 ԱՄՆ-ի դոլար, դպրոցական պարագաներ և խաղալիքներ՝ 900,000 ԱՄՆ-ի դոլար, շինանյութ՝ 1,500,000 ԱՄՆ-ի դոլար, կահույք և կենցաղային պարագաներ՝ 1,500,000 ԱՄՆ-ի դոլար, մարզական պարագաներ՝ 300,000 ԱՄՆ-ի դոլար, հիգիենիկ պարագաներ՝ 300,000 ԱՄՆ-ի դոլար: Նախատեսվում է, որ տրանսպորտային ծախսերը Հայաստանի տարածքում չեն գերազանցի 100,000 ԱՄՆ-ի դոլարը: Բեռները տեղափոխելու նպատակով ՀՀ տարածքում տրանսպորտային ծառայություն մատուցող որևէ կազմակերպության կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հետ կնքվելու է ծառայությունների մատուցման մասին պայմանագիր: Ապրանքները շահառուներին բաժանվելու են «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից՝ համայնքային ակտիվ (նախաձեռնող) խմբերի և համայնքի ղեկավարների միջոցով կամ համատեղ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպության ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառում են Հայաստանի տարածքում տրանսպորտային ծախսեր, որոնք կկազմեն 100,000 ԱՄՆ-ի դոլար:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնա-կառավարման և այլ մարմինների հետ	Տարածքային զարգացման ծրագիրն իրականացնելու ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է տարածաշրջանում գտնվող պետական և տեղական ինքնակառավարման և այլ շահագրգիռ մարմինների հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից: Հումանիտար օգնություն ստացած շահառուների վերջնական ցուցակները տրամադրվելու են սոցիալական ծառայություններին և այլ շահագրգիռ մարմինների: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ